



Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի՝ ԻԿՕՄՍՍ-ի առաջարկությամբ 2016թ. ապրիլի 18-ը՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրը, նշվում է «Սպորտի ժառանգությունը» խորագրի ներքո: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը ԻԿՕՄՍՍ/Հայաստան կազմակերպության հետ համատեղ թեմայի շրջանակում կազմակերպում է «Առյուծի և ցուլի որսը Մերձավոր Արևելքում» խորագրով ցուցահանդես: Ցուցահանդեսը այցելուին կներկայացնի Հին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած սպորտային որոշ իրադարձություններ, Ուրարտուում առյուծի և ցուլի որսի մասին վկայող տեսարաններ: Մերձավոր Արևելքի մի շարք տարածաշրջանների կրոնապաշտամունքային համակարգում կարևոր տեղ է զբաղեցրել առյուծի, երբեմն նաև՝ ցուլի ծիսական որսը: Այդ մասին վկայված են ինչպես Հին մերձավորարևելյան պատկերագրության տարբեր տեսարաններում, այնպես էլ մի շարք գրավոր սկզբնաղբյուրներում:

Առյուծի և ցուլի ծիսական որսի «ինստիտուտը» հատկապես տարածված է եղել Ասորեստանյան պետության Միջին և Նոր թագավորությունների ժամանակաշրջանում: Այստեղ այն մեծամասամբ կրել է «արքայական բնույթ»: Առյուծի և ցուլի որսը յուրատեսակ մրցություն է եղել և իր մեջ պարունակել է սպորտային տարրեր: Ուրարտական պատկերագրության մեջ առկա են որոշ տեսարաններ, որոնք կարող են ապացույց հանդիսանալ Վանի թագավորությունում առյուծի և ցուլի ծիսական որսի գոյության մասին: Նման տեսարաններ հատկապես առկա են ուրարտական մի շարք գոտիների վրա պատկերված դրվագաշարերում: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանն այն եզակի հաստատություններից է, որտեղ պահվում են հնագիտորեն ֆիքսված արտեֆակտեր՝ առյուծի և ցուլի որսի տեսարաններով: Դրանք համապատասխանաբար Նոր Արեշի կոլումբարիումից և Երևանի Բիայնական դամբարանից գտնված գոտիների հատվածներն են: Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված «Առյուծի և ցուլի որսը Մերձավոր Արևելքում» ցուցահանդեսի բացումը տեղի կունենա Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանում, 2016թ. ապրիլի 18-ին, ժամը՝ 14:00-ին/ք. Երևան, Էրեբունի փող. 38/:

Ցուցահանդեսը կգործի մինչև 2016թ մայիսի 8-ը:

000000000000 000 000 0000000 00 000000-000000000000000000 0000000000000000 00000000000000  
0000000 00000000 0000000000000000 0000000000000000 0 000000000000 00000000000000  
00000000000000 0000000000000000 00 0000000000, 00000000000 000000000000000 00000000000000  
0 000000000000000000000000 00000000000000 00000000000000 00000000 : 000 00000 0000000-0  
00000000000000 00000000000000 00000000000 0 0000000 000 000000000000 000000000000  
000000000000000000000000 «0000000 0000000000000000» 00000000 000000 :